# ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՆ ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Առաջին միջազգային իրավական գործիքը, որը մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի կենտրոնում է դնում զոհերի իրավունքների պաշտպանությունը: Բաց է միանալու Եվրոպայի խորհրդի անդամ չհանդիսացող պետությունների համար:

**2005** Ընդունվել է Վարշավայում

**2008** մտել է ուժի մեջ

**2025** 48 կողմ պետություն

## Ո՞ՐՆ Է ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔԸ

- Ճանաչում է մարդկանց թրաֆիքինգը որպես մարդու իրավունքների խախտում
- Կիրառվում է թրաֆիքինգի բոլոր զոհերի և թրաֆիքինգի բոլոր ձևերի նկատմամբ
- Կենտրոնացած է զոհերի իրավունքների պաշտպանության վրա
- Ապահովում է զոհերի և վկաների պաշտպանության համար շրջանակ
- Ստեղծում է մոնիթորինգի մեխանիզմ՝ Կոնվենցիայի արդյունավետ իրականացումն ապահովելու համար

## ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԵՆԱՍՅՈՒՆԵՐԸ

- ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ
- ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ
- ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ
- ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## Ի՞ՆՉ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒՆԵՆ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԶՈՀԵՐԸ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՀԱՄԱՁԱՅՆ

### ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄ

Որպես զոհեր նույնականացման իրավունք՝ անկախ թրաֆիքինգով զբաղվողների նկատմամբ որևէ քրեական դատավարությունից:

### ՄԱՍՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Զոհերի անձնական տվյալները չեն կարող հրապարակվել և կարող են պահպանվել միայն որոշակի իրավաչափ նպատակների համար:

### ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անկախ նրանից, թե արդյոք զոհերը համագործակցում են քրեական հետաքննության հետ, նրանք իրավունք ունեն ստանալու պատշաճ և ապահով կացարան, հոգեբանական, նյութական և այլ օժանդակություն:

### ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ

Ենթադրյալ զոհերն իրավունք ունեն ստանալու առնվազն 30 օր տևողությամբ վերականգնման և խորհրդածության ժամանակաշրջան՝ թրաֆիքինգով զբաղվողների ազդեցությունից ձերբազատվելու և/կամ իրավասու մարմինների հետ համագործակցելու վերաբերյալ որոշում ընդունելու համար:

### ԿԱՑՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

Երկարաձգման ենթակա կացության թույլտվություն ստանալու իրավունքը, երբ զոհերի գտնվելը երկրի տարածքում պայմանավորված է նրանց անձնական բնույթի հանգամանքներով կամ անհրաժեշտ է քննության կամ քրեական դատավարության ընթացքում իրավասու մարմինների հետ համագործակցության համար:

### ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Տեղեկատվություն, իրավական աջակցություն, անվճար իրավաբանական օգնություն և զոհի կրած նյութական ու ոչ նյութական վնասների համար փոխհատուցում ստանալու իրավունքը:

### ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԱԴԱՐՁ

Զոհերի վերադարձը իրենց ծագման երկիր պետք է իրականացվի նրանց իրավունքների, անվտանգության և արժանապատվության պատշաճ պահպանմամբ, և հաշվի առնելով զոհ լինելու փաստին առնչվող ցանկացած իրավական ընթացակարգի կարգավիճակը:

### ՊԱՏԺԻ ՉԵՆԹԱՐԿՎԵԼՈՒ ԴՐՈՒՅԹԸ

Պետությունները պետք է նախատեսեն թրաֆիքինգի զոհերի նկատմամբ պատիժ չկիրառելու հնարավորությունը անօրինական գործողություններում իրենց ներգրավվածության համար, որոնք նրանք ստիպված են եղել կատարել:

### ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Զոհերն ու նրանց ընտանիքի անդամներն ունեն հնարավոր վրեժխնդրությունից կամ ահաբեկումից պաշտպանության իրավունք:

### ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Թրաֆիքինգի բոլոր զոհերի նկատմամբ կիրառելի իրավունքներից բացի, երեխաներն օգտվում են հատուկ աջակցության և պաշտպանական միջոցներից, որոնք հաշվի են առնում նրանց լավագույն շահերը:

# ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՄԵԽԱՆԻԶՄ

Կոնվենցիայի կարևոր հավելյալ արժեքներից մեկը մոնիթորինգի մեխանիզմն է, որը ստեղծվել է Կոնվենցիայի իրականացումը վերահսկելու համար: Այն բաղկացած է երկու հենասյունից և հիմնված է կողմ պետությունների հետ մշտական երկխոսության վրա:

### ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԽՈՒՄԲ (GRETA)

**15** անկախ փորձագետ, որոնք տարբեր բնագավառների մասնագետներ են

GRETA-ն պարբերաբար գնահատում է Կոնվենցիայի իրականացման ընթացքը յուրաքանչյուր կողմ պետությունում՝ ուղարկում է հարցաշարեր իշխանություններին և քաղաքացիական հասարակությանը, այցելում է տվյալ երկիր, պատրաստում է զեկույց՝ վերլուծության արդյունքներով և եզրակացություններով: GRETA-ն նաև ուղեցույցներ է տրամադրում Կոնվենցիայի թեմաների և հասկացությունների վերաբերյալ:

### ԿՈՂՄԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Կոնվենցիայի կողմ պետությունների ներկայացուցիչներից կազմված քաղաքական մարմին:

GRETA-ի զեկույցների և եզրակացությունների հիման վրա Կողմերի կոմիտեն առաջարկություններ է ուղղում կողմ պետություններին GRETA-ի զեկույցից բխող ձեռնարկվելիք միջոցառումների վերաբերյալ:

**ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԿՈՂՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՆԱՀԱՏՎՈՒՄ Է ԱՄԵՆ 4-5 ՏԱՐԻՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ**

**1-ԻՆ ՓՈՒԼ**
2010
Նպատակ՝ Կոնվենցիայի իրականացման ընդհանուր ամփոփում

**2-ԻՆ ՓՈՒԼ**
2014
Նպատակ՝ միջոցառումների ազդեցությունը, երեխաների թրաֆիքինգ և նոր միտումներ

**3-ԻՆ ՓՈՒԼ**
2018
Նպատակ՝ արդարադատության մատչելիություն և պաշտպանության արդյունավետ միջոցներ

**4-ԻՆ ՓՈՒԼ**
2023
Նպատակ՝ Թրաֆիքինգի նկատմամբ խոցելիությունը և տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործումը

## ԻՆՉՊԵ՞Ս Է ՏԵՂԻ ՈՒՆԵՆՈՒՄ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

Յուրաքանչյուր փուլի համար GRETA-ն մշակում է **հարցաշար,** որն ուղարկում է պետական մարմիններին և քաղաքացիական հասարակությանը:

GRETA-ն կազմակերպում է **այց տվյալ երկիր՝** լրացուցիչ տեղեկություններ հավաքագրելու նպատակով: GRETA-ն պատրաստում է **զեկույցի նախագիծ,** որը ներկայացնում է իշխանություններին մեկնաբանությունների համար:

Ստանալով իշխանությունների մեկնաբանությունները՝ GRETA-ն ընդունում է **վերջնական զեկույց,** որը հրապարակվում է:իշխանությունների մեկնաբանությունները՝ GRETA-ն ընդունում է **վերջնական զեկույց,** որը հրապարակվում է:

GRETA-ի եզրակացությունների հիման վրա մշակում է հանձնարարականներ: Կառավարությունները զեկուցում են Կողմերի կոմիտեին դրանց իրականացման համար ձեռնարկված միջոցառումներ մասին:

GRETA-ն այնուհետև ուղարկում է **լրացուցիչ հարցադրումներ** և/կամ կազմակերպում է կլոր սեղան տվյալ երկրում:

## Ի ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԹԵՄԱՏԻԿ ԱՇԽԱՏԱՆՔԸ

GRETA-ն հրապարակել է թեմատիկ զեկույցներ և ուղեցույցեր հետևյալի շուրջ՝

- Թրաֆիքինգ աշխատանքային շահագործման նպատակով
- Երեխաների թրաֆիքինգ
- Օժանդակություն զոհերին
- Միջազգային պաշտպանության հասանելիություն թրաֆիքինգի զոհերի համար
- Օնլայն և տեխնոլոգիաների միջոցով խթանվող թրաֆիքինգ
- Թրաֆիքինգ միգրացիայի համատեքստում
- Վերականգնման և խորհրդածության ժամանակաշրջան

## ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

- Օրենսդրական փոփոխություններ
- Մարդկանց թրաֆիքինգի հարցերով ազգային զեկուցողների նշանակում
- Թրաֆիքինգի դեմ պայքարի ռազմավարությունների և գործողությունների ծրագրերի ընդունում
- Թրաֆիքինգի զոհերի նույնականացման բարելավված ընթացակարգեր
- Մասնագիտացված կացարանների ստեղծում
- Զոհերին օժանդակելու նպատակով ֆինանսական միջոցների ավելացում
- Անձնակազմի վերապատրաստում և մասնագիտացում

**ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

Բոլոր երկրների զեկույցները, ուղեցույցները և հրապարակումները հասանելի են առցանց

www.coe.int/trafficking
trafficking@coe.int

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE